

— Գրիգոր որդեակ,— պատասխանեց Սեթայ,— կարելի է մտքեդ անցաւ թէ երբ դու այս երկու տարուան մօտ ժամանակ, որ աջ բազուկ եղար մեզ վտանգի օրեր, եւ ես երբեք չեմ կրնար մոռնալ, չեմ յիշեր քու օգուտդ, վասնզի քանի որ եկեր ես օր մը այս նիւթին վրայ չի խօսեցայ. բայց պէտք է գիտնաս, որ իշխանին գրեցի քանի անգամ, իսկ նա ինձ իմացուց թէ՝ «Չէր մոռցեր երբեք քու իրաւունքդ, բայց Մամիկոնեանք ազգային միաբանութեան թշնամի չընելու համար՝ առժամա այս խնդիրը մեջտեղ հանել չէր կրնար» եւ զիս համբերութեան կը յորդորէր: Իսկ հիմա կարելի է որ զքեզ ինք ուզէ վտանգի ինձ նոր հրաման կընէ զօրքերը չի ցրուել եւ պատրաստի պահել չգիտեմ ի՞նչ նպատակաւ, վասնզի չի յայտնէր: Պէտք է գիտնաս նաեւ, որ ամէն անգամ նամակաց մէջ մեծ գոհութիւն եւ սեր կը յայտնէ քու ազնիւ ծառայութեանցդ համար, եւ որ ես չեմ ուզեր կրկնել, վասնզի զքեզ իբրեւ զաւակ համարել եմ հաւասար իմ Վարդիս:

— Այս խօսքերուն բացի շնորհակալութենէն ես ոչինչ չունեմ պատասխանելու, ձեր ազնիւ մայրական սիրոյն միշտ երախտագետ եմ, եւ ինչչա՛ր ծանր է լինի իմ սրտիս Ռշտունեաց տունէն կարճ բաժանմունք մը նաեւ, Վարդանայ բերդի աւերակներուն եւ մօր մը գերեզմանին այց մը դեռ հեռուն ձգել ինձ յանցանք կը թուի:

— Շատ իրաւացի կը գտնեմ այդ զգացմունքդ, որդեակ, դու ինչպէս որ գիտես, այնպէս ըրէ:

— Դեռ քանի մը օր ժամանակ ունինք, իշխանուհի, այս նիւթիս վրայ մտածելու: Միայն խնդիրք մը նաեւ ունիմ. եթէ կարելի էր, Յուսիկի հրաման ընէիք, որ Զերա կողմէն եկած ցորենի վաճառականներու, որ երկու տարվնէ ի վեր իրենց առնելիքներն չեն ստացած՝ վճարէ. ես քանի անգամ խնդրեցի, բայց ինք այսօր վաղը ըսելով միշտ կը յետաձգէ եւ մարդիկը ամէն օր կը դեգերին ու կը գանգատին:

— Անիրաւը երկու տարի է այդ մարդկանց դեռ չի վճարեր , լաւ՝, ես հիմա իրեն կը հասկցնեմ,— ըսաւ բարկութեամբ եւ ոտք ելաւ:

— Խնդրեմ, իշխանուհի, ես ամբաստանութեան մտօք չեմ ըսեր:

— Կ'իմանամ, որդեակ,— ըսաւ Սեթայ, իւր բարկութեան ծիծաղ մը խառնելով,— տարին քանի մը անգամ պէտք է որ ես Յուսիկի հետ կռոււմ. ուստի այս՝ դարձեալ առիթն է, վասնզի այդ մարդիկը քանի անգամ ինձ խնդիրք